ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԱՆԱՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՍԱՏՈՒՐԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԹԵՀՐԱՆԻ, ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

**Է.00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

ТАНАДЖЯН ЛУСИНЕ АСАТУРОВНА

СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ АРМЯН ЛОС-АНДЖЕЛЕСА, ТЕГЕРАНА, БЕЙРУТА)

АВТОРЕФЕРАТ

**диссертация на соискание ученой
степени кандидата исторических наук
по специальности 07.00.04 “Этнография”**

ЕРЕВАН-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. ***Ռ. Ս. Կարապետյան***
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ. ***Ս. Ս. Մկրտչյան***
պ. գ. թ. ***Հ. Գ. Սարգսյան***
Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. մարտի 5-ին, ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2020թ. հունվարի 24-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Պատմական գիտ. թեկնածու՝ ***Ա. Է. Հարությունյան***

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН РА.

Научный руководитель: доктор ист. наук ***Р. С. Карапетян***
Официальные оппоненты: доктор ист. наук ***С. С. Мкртчян***
кандидат ист. наук ***Г. Г. Саргсян***
Ведущая организация: Ереванский государственный университет

Защита состоится 5 марта 2020 г. в 15:00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).
Диссертацию можно найти в библиотеке Института археологии и этнографии НАН РА.
Автореферат разослан 24 января 2020 г.
Ученый секретарь специализированного совета,

Кандидат истарических наук ***Арутюнян А. Э.***

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ներկայումս ծավալուն միգրացիոն գործընթացները նպաստում են բազմաէթնիկ հանրույթների աճին: Վերջինիս հետևանքով բնակչության էթնիկական, մշակութային, կրոնական և այլ հատկանիշների բազմազանությունը հանգեցրել է սոցիալական փոփոխությունների հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտությանը: Նմանատիպ բազմազանության մեջ հետզհետե ավելի արդիական է դառնում տարբեր հասարակություններում առանձին էթնիկ խմբերի էթնոսոցիալական և էթնոմշակութային հատկանիշների փոփոխությունների ուսումնասիրությունը: Կարևորելով նշյալ հետազոտական հիմնահարցը, մեր կողմից իրականացվել է էմպիրիկ հետազոտություն հայկական սփյուռքում՝ Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայերի շրջանում սոցիալական գործընթացների և տեղաշարժերի առկա իրավիճակը, հիմնական միտումները և շարժընթացը բացահայտելու նպատակով:

Առհասարակ էթնիկ խմբերի տարածական և սոցիալական տեղաշարժերի արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները կարելի է որակել որպես էթնոսոցիալական գործընթացներ: Դա բացատրվում է նրանով, որ այն վերաբերում է ինչպես էթնիկ խմբի, այնպես էլ միջավայրի (սոցիալական, էթնոմշակութային) փոխազդեցության գործընթացին: Այդ գործընթացների նորովի իմաստավորման խնդիրը դառնում է խիստ կարևոր՝ հասկանալու ժամանակակից սոցիալ-մշակութային գործընթացների բնույթը և ուղենշելու դրանց հետագա զարգացումը:

Օտար միջավայրում գտնվող էթնիկ հանրույթների սոցիալական հատկանիշների փոփոխություններն իրենց հերթին հանգեցնում են դրանց էթնոմշակութային առանձնահատկությունների փոփոխություններին: Այս խնդիրը վառ արտահայտված է հատկապես սփռված էթնիկ հանրույթների շրջանում, որոնց կենսագործունեությունն ընթանում է միմյանցից տարբեր այլէթնիկ միջավայրերում:

Էթնոսոցիալական գործընթացների համատեքստում սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությունները հատկապես մեծ կարևորություն ունեն սփյուռքում, որտեղ դրա առանձին խմբերը ներկայանում են սոցիալական, տնտեսական, մշակութային, էթնիկական յուրահատուկ բովանդակությամբ և բնորոշվում են այդ հատկանիշների անընդհատ փոփոխությամբ: Որպես դասական սփյուռքի օրինակ՝ հայերն ունեն օտար միջավայրերում կենսագործունեության հարուստ փորձ: Տարբեր միջավայրերում ձևավորելով համայնքային կարգավորման և էթնոմշակութային առանձնահատկությունների, ինքնության կառուցակցման մեխանիզմներ՝ հայերը սփյուռքում կուտակել են հսկայական ներուժ: Այստեղ է, որ առաջ

է գալիս այդ խմբերի էթնոսոցիալական ներուժի գնահատման և փոփոխման ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Սոցիալական շերտերում դրսևորելով իրենց սոցիալ-տնտեսական ներուժը՝ հայերի տարբեր խմբեր տվյալ երկրի հասարակության մեջ զբաղեցնում են որոշակի սոցիալական կարգավիճակ: Ձեռք բերելով մասնագիտական, սոցիալական և այլ հատկանիշներ՝ տվյալ խումբը ներգրավվում է այդ հասարակության մեջ՝ որդեգրելով ինտեգրման տարբեր ուղիներ:

Սփյուռքի սոցիալ-տնտեսական, մասնագիտական ներուժի ուսումնասիրման կարևորությունը նշանավորվում է տարբեր օղակներում՝ պետական կառավարման համակարգից մինչև գիտական շրջանակներ: Այս համատեքստում առանձնահատուկ տեղ է գրավում սոցիալ-մասնագիտական ներուժի գնահատումը և դրա մշտական փոփոխությունների դուրսբերումը: Հայկական սփյուռքում տեղի ունեցող սոցիալական գործընթացները և դրանց զարգացման հեռանկարը հասկանալու համար կարևոր է էմպիրիկ հետազոտությունների միջոցով հետևել հայերի սոցիալ-մշակութային, տնտեսական հարմարման, ինտեգրման առանձնահատկությունները և սոցիալական շարժունությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ներկայացված ատենախոսության նպատակն է պարզել սփյուռքում հայերի սոցիալական փոփոխությունների ընթացքը՝ Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայկական համայնքների համեմատական վերլուծության միջոցով, ցույց տալ երեք տարբեր միջավայրերում հայերի միջսերնդային և ներսերնդային սոցիալական շարժունության առանձնահատկությունները: Աշխատանքի շրջանակում իրականացված հետազոտության *օբյեկտը* հայկական սփյուռքի երեք համայնքների ներկայացուցիչներն են: Հետազոտության *առարկան* այդ համայնքներում տեղի ունեցող սոցիալական փոփոխություններն են:

Աշխատանքում առաջադրվել են հետևյալ *հետազոտական խնդիրները*.

- հասկանալ սոցիալական փոփոխությունների օրինաչափությունները էթնոսոցիալական գործընթացների համատեքստում այլազգի միջավայրում,
- բացահայտել հայկական սփյուռքում էթնոմշակութային միջավայրի դերը սոցիալական տեղաշարժերի գործում,
- դուրս բերել սոցիալական գործընթացները չափող համընդհանուր ցուցիչներ՝ երեք համայնքները (Լոս Անջելես, Թեհրան, Բեյրութ) համեմատելի դարձնելու համար,
- դուրս բերել և համեմատել հայերի սոցիալ-մասնագիտական կազմը երեք համայնքներում,

• բացահայտել սոցիալական շարժունությունը պայմանավորող գործոնները երեք համայնքներում,
• ցույց տալ սփյուռքում հայերի ներսերնդային և միջսերնդային սոցիալական շարժունության ընդհանուր և առանձնահատուկ կողմերը,
• վերլուծել ներսերնդային և միջսերնդային սոցիալական շարժունության ընթացքը տարբեր գործոնների հետ փոխկապվածության մեջ:

Որպես նախնական հետազոտական կանխավարկածներ ներկայացվում են հետևյալները. սփյուռքում սոցիալական փոփոխությունները կախված են, մի կողմից՝ ընդունող հասարակության միջավայրից, մյուս կողմից՝ ներհամայնքային էթնոմշակութային միջավայրից: Սփյուռքի յուրաքանչյուր ուսումնասիրված համայնքում արձանագրվում է սոցիալական շարժունության առանձնահատուկ ընթացք, որտեղ որոշիչ դեր ունեն և՛ տվյալ խմբին հատուկ առաջնային, ելակետային սոցիալական հատկանիշները, և՛ էթնոսոցիալական միջավայրը: Առավել փակ, ավանդական միջավայրում դրսևորվում է սոցիալական շարժունության միագիծ վարք, առավել բաց հասարակության մեջ շարժունության «վերելքներն» ու «վայրէջքներն» առավել հնարավոր են դառնում: Սփյուռքի համայնքներում տարածական տեղաշարժերն առաջ են բերում սոցիալական կարգավիճակների, դերերի և համայնքի սոցիալ-մասնագիտական կազմի անընդհատ փոփոխություն:

Ատենախոսության աղբյուրագիտական և իրավանորմատիվային հիմքը: Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են ձևայնացված հարցումները, փորձագիտական և խորին հարցազրույցները, դիտարկման արդյունքները: Հետազոտությունները հեղինակի կողմից իրականացվել են 2013, 2014 և 2015 թթ. Լոս Անջելես (ԱՄՆ), Թեհրան (ԻԻՀ) և Բեյրութ (ԼՀ) քաղաքներում: Սույն ատենախոսության մեջ օգտագործվել են նաև այլ հետազոտողների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև այլ երկրորդային տվյալներ:

Ատենախոսության մեթոդական հիմքերը: Ընտրված օբյեկտի, առարկայի, նպատակի և խնդիրների բնույթը պայմանավորել է հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքը: Կիրառված մեթոդաբանությունը թույլ է տվել ստանալ ներկայացուցչական տվյալներ՝ ապահովելով ստացված արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը:

Հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011-2019 թթ., ղեկավար Ռ.Կարապետյան):

Տվյալ քաղաքներում հայկական համայնքների ընտրությունը պայմանավորված է ոչ միայն հայերի մեծ թվաքանակով և հարուստ կենսափորձով: Նշված խմբերի թիրախավորումը բացատրվում է նաև

տարբեր պայմաններում փոփոխականների մոտավորապես միանման ամբողջության համեմատությամբ և վերլուծությամբ, ինչը ենթադրում է միաէթնիկ-բազմաէթնիկ, մոտ-հեռու և այլակրոն միջավայր, հին և նոր գաղթօջախներ, բնակության պարզ, բարդ, հավաք և ցրիվ ձևեր և այլն:

Հետազոտության ընթացքում կիրառվել է միջգիտակարգային մոտեցում՝ սփյուռքագիտության, էթնոսոցիոլոգիայի և սոցիալական մարդաբանության շրջանակներում: Վերջինս հնարավորություն է տվել իրականացնել առավել արդյունավետ և համակողմանի վերլուծություն:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը ներառել է սփյուռքի ուսումնասիրության, սոցիալական փոփոխությունների և շերտավորման դասական հայեցակարգային մոտեցումները, որոնք դիտարկվել են համեմատական վերլուծության մեթոդով: Հավելյալ տեղեկատվության ձեռքբերման համար օգտագործվել է նաև տվյալների երկրորդային մշակման եղանակը: Որպես էմպիրիկ վերլուծության մեթոդներ են ընտրվել. ա) տվյալների տեսական վերլուծության մեթոդներ (համակարգային-կառուցվածքային վերլուծություն, գիտական գրականության վերլուծություն, ընդհանրացում, մեկնաբանություն), բ) տվյալների վիճակագրական մշակման մեթոդներ (SPSS վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար), գ) տվյալների մեկնաբանություն տիպաբանման, կորելացիոն կապերի և գրաֆիկների վերլուծություն:

Հաշվի առնելով ուսումնասիրության օբյեկտի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական հետևյալ մեթոդների համալիր կիրառմամբ՝

- Փորձագիտական հարցազրույց տվյալ հիմնախնդրով, սփյուռքի ուսումնասիրության մեթոդաբանությամբ զբաղվող մասնագետների հետ, ինչպես տվյալ համայնքներում, այնպես էլ դրանցից դուրս: Վերջինս հնարավորություն է տվել ստանալ փորձագիտական գնահատականներ և կարծիքներ հայկական համայնքների մասին՝ տարբեր ուղղություններով: Դրանք ներառել են այդ քաղաքներում ապրող հայերի կարգավիճակի, նրանց մասին էթնիկ շրջապատի մոտ եղած կարծրատիպերի, սոցիալ-մասնագիտական շերտերի, մշակութային, կրթական, կրոնական և այլ հարցերի մասին տեղեկատվություն: Ձայնագրվել են ավելի քան 60 փորձագիտական հարցազրույցներ:
- Խորին հարցազրույց՝ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (63 հարցազրույց): Այս մեթոդը թույլ է տվել կապ հաստատել համայնքներում գրեթե բոլոր խմբերի, շերտերի հետ և հավաքագրված տեղեկատվության մեջ ապահովել գրեթե բոլոր կողմերի ներգրավվածություն: Այսպես, առաջին քայլով յուրաքանչյուր քաղաքում առանձնացվել են գործող հիմնական հայկական կազմակերպությունները, որոնցից ընտրվել են համայնքի համար էական ազդեցություն

ունեցողները: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացվել է հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով:

- Ձևայնացված հարցում, որն իրականացվել է Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի շրջանում՝ քվոտային ընտրանքով, ձնակույտի մեթոդով: Քվոտային ընտրանքի համար հիմք են ծառայել հետևյալ ցուցիչները՝ ծագումը (տարբեր երկրներից ներգաղթած և տեղացի), սեռը, տարիքը, կրթությունը: Հարցմանը մասնակցել են 230 հոգի՝ Թեհրանում, 250 հոգի՝ Բեյրութում, 450 հոգի՝ Լոս Անջելեսում: Քանակական վերլուծությունը հնարավորություն է տվել ստանալ սոցիալական տեղաշարժերի երկսերունդ դինամիկ պատկերը՝ այլ ցուցիչների հետ փոխկապվածության մեջ հայկական համայնքներում: Հետազոտությանը մասնակցել են 18 տարեկանից բարձր և հիմնականում համայնքային կյանքում ներգրավված ռեսպոնդենտները:
- Դիտարկում չներգրավված և առանց պլանի ձևաչափով:

Յուրաքանչյուր համայնքի համար հետազոտությունն անցկացվել է երեք հաջորդական փուլերով՝ նախապատրաստական փուլ, բուն դաշտային աշխատանքների փուլ և տվյալների մշակման, վերլուծության փուլ:

Ատենախոսության տեսական մոտեցումները: Սոցիալական փոփոխությունների գաղափարը սույն աշխատանքում խարսխվում է երկու հիմնական տեսությունների հիմնադրույթների վրա՝ ստրուկտուրալիզմի և սոցիալական շերտավորման: Սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությունները ներառում են մի շարք ուղղություններ ու մոտեցումներ, ինչը պայմանավորված է այդ հասկացության լայն տարածվածությամբ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում:

Հասարակական գիտությունների համակարգում սոցիալական փոփոխության տեսական հիմնավորումներն արտասահմանյան գիտական գրականության մեջ առաջին անգամ տվել են Օ. Կոնտը, Հ. Սպենսերը, Ֆ. Թեննիսը, Է. Դյուրկհեյմը: Ա. Թոյենբին, Օ. Շպենգլերը, Ս. Հանթինգտոնը, Լ. Գումիլյովն ընդգծում են ընթացող սոցիալական գործընթացների բազմազանությունը՝ դրանով իսկ մոտենալով էթնիկ գործընթացների սոցիալական համատեքստին: Արևմտյան գրականության մեջ հատկապես կարևոր նշանակություն ունեն Պ. Շտոմպկայի, Է. Գիդդենսի և Ու. Բեկի հիմնարար աշխատանքները:

Սույն աշխատության մեջ կարևորվել են Դ. Բելլի, Ս. Լուրյեի, Պ. Սորոկինի, Մ. Կագանի, Է. Շիլզի, Ա. Ախիեզերի, Զ. Գոլենկովայի, Կ. Պոլանի և այլոց աշխատությունները: Հետխորհրդային տարածաշրջաններում փոխակերպման գործընթացների սոցիալական համատեքստին են անդրադարձել Տ. Զասլավսկայան, Վ. Յադովը, Չ. Լամաժան, Ս. Զուբենկոն: Սոցիալական փոփոխությունների քաղաքական, սոցիալ-տնտեսա-

կան և մշակութային հետևանքները դիտարկվել են Յու. Հարությունյանի, Վ. Դախինի, Վ. Բայկովի, Գ. Պողոսյանի աշխատանքներում:

Հաջորդ, համեմատաբար նոր մոտեցումը սիներգետիկայի, սոցիալական ինքնակազմակերպման մոտեցումն է (Ի. Պրիգոժին, Ա. Պանարին, Վ. Աֆանասև, Ա. Ավերյանով, Վ. Վասիլկովա):

Սոցիալական շերտավորման տեսություններից աշխատության համար կարևոր են դիտարկվել Պ. Սորոկինի, Թ. Պարսոնսի, Է. Շիլզի, Ս. Միլլերի, Ռ. Էրիկսոնի, Ս. Միդլթոնի աշխատությունները: XXI դարից սկսած սոցիալական մոբիլության հիմնախնդրին անդրադարձան մի շարք արևմտյան տեսաբաններ, որոնց աշխատանքները կարևոր են համարվել սույն աշխատության մեջ: Նրանց շարքում են Է. Գիդդենսը, Պ. Բուրդյեն, Մ. Գրանովետերը: 1960-ական թվականներից խորհրդային գիտնականները սկսեցին կիրառել մեկ այլ՝ սոցիալական մոբիլությանը համարժեք տերմին՝ սոցիալական տեղաշարժ (Մ. Ռուտկովիչ, Ֆ. Ֆիլիպով, Օ. Շկարատան և այլն):

Սույն աշխատանքում ուշադրություն է դարձվել Մ. Վեբերի, Է. Գիդդենսի, Է. Դյուրկհեյմի, Ռ. Մերտոնի, Ռ. Բենեդիկտի, Ջ. Միդի, Թ. Պարսոնսի և այլոց հայացքներին: Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտողներից որոշները կենտրոնացել են այս գործընթացի տեսական-մեթոդական իմաստավորման վրա (Ե. Աբրահամով, Ա. Ախիեզեր):

Աշխատանքում քննարկվել են նաև Մ. Վեբերի, Է. Դյուրկհեյմի, Դ. Զայցեվի, Գ. Զիմմելի, Ն. Լումանի, Ռ. Պուտնամի, Ա. Թոքվիլի աշխատություններն ընդունող հասարակության և ներգաղթյալների, ինչպես նաև տարբեր խմբերի սոցիալական փոխհարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ:

Ներկայացվող աշխատանքում շահավետ է համարվել անդրադարձը սփյուռքի վերաբերյալ գրականությանը: Սփյուռքի դասական մեկնաբանումները ներկայացված են Ու. Սաֆրանի, Գ. Շեֆֆերի, Ռ. Քոհենի, Ջ. Արմսթրոնգի, Ն. Բրյուբեյքերի, Թ. Ֆայսթի, Ջ. Դահինդենի աշխատություններում:

Աշխատանքում կարևոր են համարվել նաև հայկական սփյուռքի պատմությամբ, ձևավորմամբ և ներկա իրավիճակով, ինքնության հարցերով զբաղվող հետազոտողների (Խ. Թոլոյան, Վ. Սահակյան, Հ. Չիլինգիրյան, Լ. Աբրահամյան, Հ. Մարության, Է. Մելքոնյան, Ա. Եղիազարյան, Տ. Ղանալանյան, Ա. Սանջյան, Կ. Դալլաքյան, Վ. Հովյան) մոտեցումները:

Հայ հետազոտողներից սփյուռքում սոցիալական գործընթացներին, հայերի սոցիալ-մասնագիտական և ժողովրդագրական կազմին, փոփոխություններին անդրադարձը բավականին սակավ է: Իրենց աշխատություններում այդ հարցերին անդրադարձել են Յու. Հարությունյանը, Հ.

Սարգսյանը, Ռ. Կարապետյանը, միգրացիայի համատեքստում հարցերը քննարկվել են Մ. Գալստյանի աշխատությունում:

Ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Սույն աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ հայկական սփյուռքի երեք տարբեր համայնքներ ուսումնասիրվել են մեթոդաբանության լայն կիրառմամբ՝ ներառելով քանակական և որակական մեթոդներ, և համեմատության միջոցով ցույց են տրվել սփյուռքում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունները: Կիրառվել է երեք համայնքներում հայերի սոցիալ-մասնագիտական կազմի խմբավորման հայեցակարգային մոտեցում, որտեղ դուրս են բերվել համեմատման-համադրման համար անհրաժեշտ փոփոխականներ:

Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն ժամանակակից սփյուռքում սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագրիչները նկարագրող փաստական նյութ է, որը կարող է հիմք դառնալ հետագա հետազոտությունների համար: Այն նոր մոտեցում է սփյուռքի ուսումնասիրության տեսամեթոդաբանական շրջանակում, ինչը կարևոր է սոցիալական փոփոխությունների տեսության, սփյուռքագիտության, էթնոսոցիոլոգիայի և այլ գիտակարգերի զարգացման տեսանկյունից:Աշխատանքի գործնական նշանակությունը կարևորվում է մի քանի ուղղություններով՝ սփյուռքի քարտեզագրման, ներուժի գնահատման տվյալ համայնքի և Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների կառուցման, ՀՀ կողմից սփյուռքի քաղաքականության և ռազմավարության մշակման, ինչպես նաև ՀՀ-ում սփյուռքի ներուժի ներառման տեսանկյունից: Սփյուռքի սոցիալական ներուժի ճանաչման և գնահատման առումով սույն հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ համայնքային հետագա զարգացումների կանխատեսման համար:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են 10 գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել հայաստանյան և արտասահմանյան հրատարակություններում: Ատենախոսության մեջ քննարկվող հայեցակետերը, դրույթներն ու հարցադրումները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ իրենց բաժիններով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսությունը եզրափակվում է հավելվածով (գծապատկերներ), որն արտահայտում է քանակական հետազոտության տվյալները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ձևակերպվել և հիմնավորվել է թեմայի ուսումնասիրման կարևորությունն ու արդիականությունը, շարադրվել են հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները, շեշտադրվել է աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը, ներկայացվել են մեթոդաբանական հիմքերը և օգտագործված գիտական աղբյուրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԹՆԻԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1 «Սոցիալական փոփոխությունների էությունը և տեսամեթոդաբանական մոտեցումները» ենթագլխում ներկայացված են սոցիալական փոփոխություններին վերաբերող մի շարք տեսական մոտեցումներ և իրականացված հետազոտություններ, որոնք թույլ են տվել վերհանել սոցիալական փոփոխությունը որպես երևույթ, անդրադառնալ դրա էությանը, բնույթին, տեսակներին և այլն: Ենթագլխում տրվել է թեմայի ուսումնասիրության վերաբերյալ հետազոտական և գիտական դաշտում առկա գրականության, տեսական, մեթոդաբանական մոտեցումների, իրականացված հետազոտությունների համալիր վերլուծություն: Քննարկված տեսություններն օգնում են իմաստավորել և հասկանալ սփյուռքում սոցիալական փոփոխությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները՝ մի շարք գործոնների ազդեցությամբ:

1.2 «Սոցիալական փոփոխությունների էթնիկական բաղադրիչը» ենթագլխում սոցիալական փոփոխությունները ներկայացված են էթնիկության համատեքստում: Շեշտադրվել են էթնիկական և սոցիալական գործընթացների փոխկապվածությունը և դրանք պայմանավորող գործոնները: Այս ենթագլխում մանրամասն անդրադարձ է կատարվել այլազգի միջավայրում էթնիկ խմբի հարմարման, ինտեգրման գործընթացներին, դրանց պատճառներին և հետևանքներին: Սոցիալական փոփոխությունների էթնիկ բաղադրիչի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն է ստանում հատկապես սփյուռքում, որտեղ առանձին խմբերն արդեն հանդես են գալիս ոչ միայն որպես էթնիկ խումբ: Սփյուռքի առանձին համայնքներ, ձևավորելով առանձին սոցիալական կառուցվածքներ, ընդունող երկրում փոխազդեցության մեջ են մտնում: Այս բազմագործոն փոխազդեցության արդյունքում է, որ տեղի են ունենում սոցիալական փոփոխությունները սփյուռքի տարբեր հատվածներում: Սփյուռքում տեղի ունեցող գործընթացների համատեքստում ադապտացիայի և ինտեգրման տեսությունները թույլ են տալիս հետևել դրանց

բովանդակային կողմերին: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ ինտեգրացիոն մոտեցումը հնարավորություն է ընձեռել քննարկել սոցիալական փոփոխությունները խումբ-միջավայր դիխոտոմիայում և դրանց փոխհարաբերությունների յուրահատկությունները:

1.3«Սոցիալական շարժունությունը սփյուռքում՝ որպես փոփոխությունների արտահայտման ձև» ենթագլխում շեշտադրվել են սոցիալական շարժունության երևույթը, դրա տեսակները և այլազգի միջավայրում դրա առանձնահատկությունները: Առանձնացվում են սոցիալական շարժունության մի քանի տեսակներ: Հատկապես այլազգի միջավայրում առանձին խմբերի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն է ստանում ներսերնդային և միջսերնդային սոցիալական շարժունության դրսևորումների քննարկումը: Վերջինս հնարավորություն է տալիս հետևել էթնիկ խմբի անդամների սոցիալական դիրքերի փոփոխությունների շարժընթացը մի սերնդի ներսում կամ սերունդների միջև: Այն նաև թույլ է տալիս հասկանալ անհատի՝ գործունեության մի տեսակից մյուսին անցման կամ այլ միջավայր մուտք գործելու մեխանիզմը: Այստեղ առաջ է գալիս մեկ այլ հասկացություն՝ սոցիալ-մասնագիտական մոբիլություն: Սփյուռքի տարբեր խմբերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակը հաճախ կապվում է տվյալ էթնոսի առանձնահատկությունների հետ: Էթնիկ խմբում սոցիալական մոբիլությունն արտահայտում է դրա սոցիալական հատկանիշների փոփոխությունը, արդյունքը և շարժընթացը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

2.1 «Սփյուռքում էթնոսոցիալական գործընթացների ուսումնասիրության առկա մոտեցումների վերլուծությունը» ենթագլխում ներկայացված են սփյուռքի ուսումնասիության մի շարք կարևորագույն ուղղություններ, որոնք առնչվում են սոցիալական փոփոխությունների խնդրին: Քննարկվել են սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունները հայկական սփյուռքում, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հայկական սփյուռքում էթնոսոցիալական գործընթացների ուսումնասիրության հիմնական մոտեցումներին, դիտարկվել է հայկական սփյուռքի տարբեր համայնքներում միջավայրի դերը սոցիալական փոփոխությունների համատեքստում: Առանձնացվել և ընդհանրական վերլուծության են ենթարկվել սփյուռքի ուսումնասիրության նախնական մոտեցումները, դրանց զարգացումը և ներկա իրավիճակը: Առանձին քննության են առնվել սփյուռքի տիպաբանման խնդիրների և առաջացման պատճառների վերաբերյալ եղած հետազոտությունները: Դիտարկելով հայկական սփյուռ-

քի մի շարք բնութագրիչներ՝ առանձնացվել է հատկապես տեղաբաշխման ձևի, էթնոմշակութային բնութագրիչների ազդեցությունը սոցիալական փոփոխությունների վրա:

2.2 «Հայկական համայնքների էթնոմշակութային միջավայրը և սոցիալական փոփոխությունները» ենթագլխում հիմնական նպատակն է ցույց տալ միմյանցից տարբերվող հայկական սփյուռքի տարբեր հատվածների միջավայրային առանձնահատկությունները: Ներկայացված որակական և քանակական բնույթի հետազոտական նյութերի վերլուծությունը, ինչպես նաև այլ երկրորդային տվյալները թույլ են տվել դուրս բերել Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայկական համայնքային միջավայրերը մի քանի ասպեկտներով: Սփյուռքում հայերի էթնոսոցիալական և էթնոմշակութային վարքը խարսխվում է մի շարք ցուցիչների վրա: Դրանց մեջ նշված համայնքներում կարող ենք առանձնացնել համայնքի ներկայացուցիչների լեզվական վարքը, կրթական կողմնորոշումները, սոցիալ-ժողովրդագրական, մասնագիտական բնութագրիչները, ընտանեկան կազմը, տարածական տեղաշարժերը, ընդունող երկիր-համայնք հարաբերություններն ու կարծրատիպերը և այլն: Երեք երկրների միմյանցից խիստ տարբերվող միջավայրերում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում տվյալ քաղաքներում հայերի տարածական, սոցիալական տեղաշարժերը, արտագաղթի ու ներգաղթի միտումները, քաղաքային պայմաններում ինտեգրվածության և էթնոմշակութային գործընթացների ընթացքն ու զարգացումը: Այսպիսով, երեք տարբեր հասարակություններում հայկական համայնքների ընդհանուր և առանձնահատուկ միջավայրային գործոնները հիմք են հանդիսանում սոցիալական տեղաշարժերի համար: Սփյուռքում սոցիալական փոփոխությունների գնահատման լավագույն ցուցիչ կարող է հանդիսանալ սոցիալական տեղաշարժերի ընթացքի և արդյունքի ուսումնասիրությունը: Սոցիալական տեղաշարժերի գործընթացը սփյուռքում կարող է պայմանավորվել և՛ ազգին բնորոշ որակներով, և՛ տվյալ միջավայրում ձեռք բերած սոցիալական փոխազդեցության ձևերով, սոցիալական դիրքով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԹԵՀՐԱՆԻ, ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

3.1 «Հայերի սոցիալ-մասնագիտական խմբերի առանձնահատկությունները» ենթագլխում դիտարկվել են երեք տարբեր միջավայրերում հայերի սոցիալ-մասնագիտական տեղաշարժերի առանձնահատուկ կողմերը՝ քանակական և որակական հետազոտությունների տվյալների հիման վրա: Ներկայացվել են

սոցիալ-մասնագիտական խմբերի տարաբաժանման մի քանի հիմնական մոտեցումներ, ընդհանրացվել և դուրս է բերվել երկու հիմնական խումբ (առավելապես ֆիզիկական և առավելապես մտավոր աշխատանք կատարողներ), որը թույլ է տվել օպերացիոնալիստական մակարդակում հաղթահարել խմբերի սահմանազատման հարցը, ինչպես նաև դրա առանձին փոփոխականների հնարավոր համընկնումները: Նմանատիպ բաժանումը հնարավորություն է տվել նաև համեմատել ուսումնասիրվող տարբեր խմբերը: Այս ենթագլխում ներկայացված է երեք համայնքների սոցիալ-մասնագիտական կազմի առանձնահատկությունները մի շարք փոփոխականների հետ փոխկապվածության մեջ: Այսպես օրինակ, ըստ հետազոտության տվյալների՝ Լոս Անջելեսի հայկական համայնքում մտավոր աշխատանք կատարողները բավական մեծ թիվ են կազմում, որոնց մեջ գերակշիռ մասը բարձր որակավորմամբ են: Տնտեսական վիճակի մասին խոսելիս կրկին պետք է հաշվի առնել բազմաշերտությունն ու առկա ենթախմբերը: Տարբեր տարածաշրջաններից եկած հայերը, խիստ տարբերվում են իրենց տնտեսական գործունեությամբ և զբաղեցրած սոցիալ-մասնագիտական կառուցվածքով: Ի տարբերություն Լոս Անջելեսի՝ Թեհրանում հայերը մեծամասամբ զբաղված են ֆիզիկական աշխատանքով, որոնց մեջ գերակշռող են հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողները: Ըստ ընդհանուր գնահատականների՝ վերջին տարիներին աճի միտում է նկատվում դեպի բարձր որակավորմամբ մտավոր աշխատանքը: Ինչպես նշում են համայնքի ներկայացուցիչները, տևական ժամանակ, մինչև այսօր էլ արհեստը համարվել է ընտանեկան կամ բարեկամական ժառանգություն և գաղտնիությունն ապահովելով փոխանցվել է սերնդեսերունդ: Հիմնական ոլորտները, որոնցում հայերի թիվը մեծ է, մանր արհեստներն են և առևտուրը: Իսկ վարչական պաշտոնյաները շատ ավելի սահմանափակ թիվ են կազմում: Գիտական ոլորտում կան ուսուցիչներ, դասախոսներ, սակայն հաջողված, ակնառու բիզնեսմեններ, ձեռնարկատիրական ընկերություններ շատ քիչ թվով կան: Բեյրութում հարցվածների մի ստվար հատված զբաղեցնում է բարձր որակավորում ունեցող մասնագետների շարքերը: Համեմատության մեջ տեսնում ենք, որ երեք համայնքներում էլ կա մեկ գերակա՝ Լոս Անջելեսի և Բեյրութի հայերի շրջանում առավելապես մտավոր աշխատանք կատարողների, իսկ Թեհրանում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խումբ: Երեք համայնքներն էլ այս առումով ունեն իրենց առանձնահատկությունը, որն ազդել է տեղի ունեցող սոցիալական գործընթացների վրա: Անընդհատ ներգաղթող հոսքերը սոցիալական կառուցվածքում առաջ են բերում նոր փոփոխություններ՝ կապված մասնագիտական նոր հատկանիշների և, առհասարակ, մասնագիտությունների ներմուծման հետ: Այս առումով Թեհրանում հենց այդ փոփոխությունը հանգեցրեց արհեստների զարգացմանը քաղաքում և հայերի տեղավորմանը հենց այդ ոլորտում: Լոս Անջելեսի տարբեր երկրներից ակտիվ հոսքերն առաջ են բերում նրանց ունեցած նախկին սոցիալ-մասնագիտական կարգավիճակի և փորձի

ուսումնասիրության կարևորություն: Երեք համայնքներում աշխատանքային զբաղվածության մեջ սեռային բաժանումները՝ պետք է նշել, որ օրինաչափորեն ֆիզիկական աշխատանքը երեք համայնքներում դիտարկվում է որպես տղամարդուն հատուկ աշխատանքային գործունեության տեսակ:

3.2 «Միջսերնդային և ներսերնդային սոցիալական շարժունության ընդհանուր և առանձնահատուկ կողմերը» ենթագլխում քանակական և որակական նյութերի վերլուծության հիման վրա տրվել է համայնքներում միջսերնդային և ներսենդային շարժունության համեմատական և համադրական պատկերը մի շարք ցուցիչների հետ փոխկապվածության մեջ: Ներսերնդային և միջսերնդային մոբիլության դիտարկումը ռետրոսպեկտիվ վերլուծության միջոցով հնարավորություն է ընձեռել դուրս բերել համայնքներում կատարված սոցիալ-մասնագիտական փոփոխությունները և ներկայի արդյունքը: Ընդհանրացված կարելի է ասել, որ աշխատանքային գործունեության առաջին փուլի ժամանակ հայերի գերակշիռ մասը Բեյրութում զբաղվել է առավելապես մտավոր աշխատանքով (62,8%), ինչպես և ներկայիս փուլում (79,3%): Աշխատանքային գործունեության երկու փուլերում էլ գերակա խումբը մտավոր աշխատանք կատարողներն են: Երկու փուլերի միջև 10% տարբերությունը վկայում է վերընթաց մոբիլության մասին: Ուսումնասիրված զանգվածի մեջ կանայք առաջին և ներկայիս աշխատանքի ժամանակ կայուն պահպանել են իրենց սոցիալական կարգավիճակները: Առավելապես մտավոր աշխատանքով զբաղված կանայք պահպանել են իրենց դիրքը՝ փոքր-ինչ նվազելով 90,6%-ից 82,7%-ի: Տղամարդկանց շրջանում առաջին և ներկայիս աշխատանքի միջև տատանումն ավելի ակներև է: Ըստ տվյալների՝ արական սեռի ներկայացուցիչներն իրենց աշխատանքի սկզբնական փուլում զբաղվել են առավելապես ֆիզիկական աշխատանքով (63%), իսկ ներկայումս գրանցելով վերընթաց մոբիլություն՝ զբաղեցնում են առավելապես մտավոր աշխատանքի ոլորտը: Միջսերնդային մոբիլությունը, ընդհանուր առմամբ առաջադիմական բնույթ է կրում Բեյրութի հայերի շրջանում: Ներկայիս սերունդը զբաղեցնում է ավելի բարձր կարգավիճակ և սոցիալական դիրք, քան նախորդը:

Թեհրանում հայերի առաջին և ներկայիս աշխատանքային գործունեության փուլերի միջև փոփոխությունները գրեթե աննշան են: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ զբաղված լինելով ընտանեկան արհեստներով և ներգրավված լինելով համայնքային կառույցներում, համախմբվածության և սոցիալական ցանցերի միջոցով կանխորոշվում է զբաղվածության բնույթը: Թեհրանում երկու սեռերի ներսերնդային մոբիլությունն արձանագրելիս տեսնում ենք, որ ի համեմատ աշխատանքային գործունեության առաջին փուլի մտավոր աշխատանք կատարողների թիվը նվազել է՝ հասնելով 82,8%-ից մինչև 42,3%: Տղամարդկանց մոտ աշխատանքային երկու փուլերի սոցիալական կարգավիճակների դիտարկումը ցույց է տալիս ֆիզիկական աշխատանք կատարողների աճ՝ 42,9%-ից հասնելով 73,1%: Թեհրանի հայ համայնքում նախորդ և ներկայիս սերունդների զբաղեցրած դիրքերի միջև կապի դինամիկ պատկերը ցույց է տալիս, որ

ներկայիս սերունդը գրեթե նույնությամբ կրկնում է նախորդ սերնդին՝ հիմնական կուտակումներ ունենալով առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խմբում: Սակայն գծային դինամիկան ցույց է տալիս, որ երկու սերունդների մոտ էլ բարձր որակավորմամբ մտավոր և հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողներն ունեն ամենաբարձր ցուցանիշները: Թեհրանահայերի մեջ գործում է սերնդից սերունդ գործունեության տեսակի ժառանգման ավանդույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատեցին նախապես դրված հետազոտական վարկածները՝ վերլուծական նյութ ապահովելով հետագա նմանատիպ խնդրի ուսումնասիրության պարագայում:

Ատենախոսությունում առաջ քաշված խնդիրների վերլուծությունը թույլ տվեց կատարել հետևյալ առանձին և ընդհանուր եզրակացությունները.

Թեհրանի հայ համայնքին վերաբերող եզրակացություններ

• Թեհրանի հայերի շրջանում տարածական, կառուցվածքային և տնտեսական նշանակալի փոփոխություններն ազդեցությունն են ունեցել նաև համայնքի էթնոմշակութային նկարագրի վրա, մասնագիտական շերտերի քանակական փոփոխության վրա:

•Պայմանավորված «փակ» միջավայրով՝ համայնքի անդամների սոցիալական կարգավիճակն առավել կայուն է: Մի քանի սերնդի սոցիալական վարքագիծը պահպանում է իր կայունությունը և կարող է խախտվել որևէ լուրջ արտաքին ազդեցությամբ:

• Համայնքում ներկայիս սերունդը սոցիալ-մասնագիտական վարքագծով գրեթե նույնությամբ կրկնում է նախորդ սերնդին: Գործում է սերնդից սերունդ գործունեության տեսակի ժառանգման ավանդույթը: Համայնքի անդամները ցուցաբերում են ներսերնդային մոբիլության միագիծ ընթացք:

• Թեհրանի հայերի շրջանում առկա է սոցիալ-մասնագիտական կազմի սեռային առանձնահատկություն: Կանայք հիմնականում չեն զբաղվում ֆիզիկական աշխատանքով:

• Թեհրանում, ընդհանուր առմամբ, համայնքային միջավայր ստեղծող խումբ կարելի է դիտարկել արհեստագործությամբ զբաղվողներին: Այս ոլորտը գրեթե մենաշնորհային է հայերի համար տվյալ քաղաքում: Թեհրանի հայկական համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների խումբը չունի հատուկ պատրաստվածության պարտադրված չափանիշներ:

• Համայնքում հատուկ նշանակություն ունեն արհեստակցական միությունները, որոնք ծառայում են որպես մասնագիտական հմտությունների ու փորձի փոխանցման օղակներ: Տարիքային գրեթե բոլոր խմբերն ունեն բարձր ներգրավվածություն այս բնագավառում:

Լոս Անջելեսի հայ համայնքին վերաբերող եզրակացություններ

• Լոս Անջելեսի հայկական համայնքի սոցիալ-մասնագիտական խմբերի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել համայնքային բազմատարրությունն ու բազմաշերտությունը՝ պայմանավորված այլ տարածաշրջաններից տարբեր կրթական-մասնագիտական հմտություններով հայերի ներգաղթով:
• Կախված ելքի երկրից և նախկին մշակութային, սոցիալական, տնտեսական փորձառությունից ու ավանդույթներից՝ Լոս Անջելեսի հայերի տարբեր խմբերի մոտ դրսևորվում է վերընթաց և վարընթաց մոբիլության ընթացք:
• Լոս Անջելեսում տեսնում ենք, որ սոցիալական վարքագծի ավանդույթի միջսերնդային տրանսմիսիան, ի տարբերություն Թեհրանի, չի գործում:
• Այստեղ հայերի ներսերնդային շարժընթացը դիտարկելիս տեսնում ենք, որ մտավոր աշխատողների ոլորտում կա սոցիալական աճ, իսկ առավելապես ֆիզիկական աշխատողների թիվը նվազել է:
• Լոս Անջելեսում ձեռնարկատերերը բավական ազդեցիկ խումբ են կազմում: Առկա սոցիալական ռեսուրսները ծառայում են նաև համայնքի այլ անդամներին մասնագիտական տարբեր ոլորտներ ներգրավելու գործընթացին:
• Հայրենակցական և այլ մասնագիտական միությունների առկայությունը ևս նպաստում են նոր ներգաղթյալների ներգրավմանը սոցիալական կյանք:
• Բոլոր մասնագիտական ոլորտներում նկատվում է և՛ կանանց, և՛ տղամարդ-կանց ներառվածություն՝ պայմանավորված բաց և ոչ ավանդական միջավայրով:

Բեյրութի հայ համայնքին վերաբերող առանձին եզրակացություններ

• Բեյրութի հայ համայնքում սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունները պայմանավորված են վերջին տասը տարիների ընթացքում տեղի ունեցած բեյրութահայերի արտագաղթի, սիրիահայերի ներգաղթի և տնտեսական ճգնաժամի հետ:
• Սոցիալ-մասնագիտական ներուժի փոփոխության հիմնական գործոնը բեյրութահայերի շրջանում նախկինում առաջնային համարվող մասնագիտական շերտի մենաշնորհային դիրքերի նվազումն է:
• Բեյրութում համայնքային կառավարման համակարգը և փոքրամաս-նություններին տրվող լայն հնարավորությունները թույլ են տալիս հայերին ունենալ սոցիալական առաջընթաց և տարբեր ոլորտներում բարձր պաշտոններ զբաղեցնելն ավելի հնարավոր է դառնում:
• Բեյրութի հայերի շրջանում գրանցվել է ներսերնդային վերընթաց մոբիլություն, որի համար ներհամայնքային միջավայրն ու ռեսուրսները, ինչպես նաև միջա-վայրը նպաստավոր պայմաններ են ստեղծել:
• Բեյրութահայերի նախորդ և ներկայիս սերնդի զբաղեցրած սոցիալ-մասնա-գիտական ոլորտների համեմատությունը թույլ է տալիս գրանցել, որ միջսերնդային մոբիլությունը, ընդհանուր առմամբ, առաջադիմական բնույթ է կրում:

• Համայնքում ընդհանուր գործունեության տեսակներից արհեստներն ու սեփական բիզնեսի առկայությունը հաճախ կրում են ընտանեկան բնույթ և երիտասարդ սերունդը կրկնում է նախորդ սերնդի տնտեսական վարքագիծը:

Ընդհանուր եզրակացություններ

• Հայկական սփյուռքի տարբեր համայնքների որակական հատկանիշները, որոնք բովանդակում են դրա կրոնական, էթնիկական, հոգևոր, մասնագիտական և այլ ուղղվածության փոփոխությունները, չափման միջոց են դառնում տվյալ խմբի գործունեության հնարավորությունների և միջավայրում ինտեգրման համար:

• Որպես ազգային նկարագրի առանձնահատկություն՝ կարելի է համարել այն, որ երեք համայնքներում էլ մտավոր աշխատանքով զբաղվողների խումբը փոքր տոկոսային տարբերությամբ գերակա խմբերից մեկն է համարվում: Ինչը թույլ է տալիս պնդել կրթության, որպես ազգային արժեքի, ընկալման մասին՝ անկախ միջավայրից:

• Տարածական տեղաշարժերը հայկական սփյուռքում անմիջական ազդեցություն ունեն նրա տարբեր հատվածներում կատարվող էթնոսոցիալական գործընթացների և փոփոխությունների վրա: Վերջիններս ունեն բազմազան ուղղվածություն և պայմանավորված են մի շարք գործոններով՝ կոնկրետ սոցիալ-քաղաքական և տնտեսական միջավայր, խմբի ձևավորման առանձնահատկություններ և այլն: Խմբի ձևավորման առաձնահատկություններն էլ որոշում են համայնքներից յուրաքանչյուրի էթնոմշակութային և սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը:

• Սփյուռքում սոցիալական փոփոխությունների չափման միավորներ են հանդիսանում սոցիալ-մասնագիտական խմբերն իրենց դինամիկ բնույթով: Սփյուռքի տարբեր համայնքներում մասնագիտական շերտերն ունեն առանձնահատուկ նշանակություն համայնքի կենսունակության և տվյալ երկրում իրենց ներկայացվածության տեսանկյունից:

• Բնակության երկրի կրոնական, ազգային հատկանիշները և ընդհանուր քաղաքականությունը փոքրամասնությունների նկատմամբ կարող են որոշիչ դեր ունենալ տվյալ երկրում հայ համայնքների սոցիալ-մասնագիտական ներուժի ձևավորման գործում:

• Սփյուռքում սոցիալական փոփոխություններն անմիջականորեն կապված են տվյալ հասարակությունում հայերի ներգրավվածության կամ հարմարման հետ, որոնք իրականանում են մշակութային կամ ազգային տարբեր տարրերի ներգրավմամբ, արտամղմամբ կամ տեղի արժեքների ներթափանցմամբ:

• Կախված ընդունող հասարակության բաց և փակ բնույթից՝ տվյալ պայմանները կարող են ունենալ ազդեցություն սոցիալական տեղաշարժերի վրա հատկապես պայմանավորված սեռային պատկանելությունից:

• Սփյուռքում անընդհատ տեղի ունեցող ներքին կամ արտաքին տեղաշարժերը համայնքների սոցիալական կառուցվածքում առաջ են բերում նոր փոփոխու-

թյուններ՝ կապված և՛ մասնագիտական նոր հատկանիշների, և՛, առհասարակ, մասնագիտությունների ներմուծման հետ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Տանաջյան Լ., Սփյուռքի հայերի սոցիալական մոբիլության համեմատական ուսումնասիրության շուրջ (Լոս Անջելեսի և Թեհրանի հայ համայնքների օրինակով), «Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ. Ռ.Կարապետյան և ուրիշներ, «Գիտություն» հրատ., 2014, էջ 104-112:
2. Տանաջյան Լ., Հայերի սոցիալական փոխակերպումները սփյուռքում, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2014, էջ 60-89:
3. Танаджян Л., Социальные изменения в диаспоре (на материалах этносоциологических исследований армян Тегерана, ЛосАнджелеса, Москвы), Этносоциология вчера и сегодня, отв. ред. и сост.: Л. Остапенко, И. Субботина. М.: Институт этнологии и антропологии РАН, 2016, стр. 199-203:
4. Տանաջյան Լ., Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻՏՈՒՍ 2, խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2017, էջ 184-194:
5. Танаджян Л., Социальные изменения среди армян в инонациональной среде, «Բանբեր Հայագիտության», 2017, թ. 1(13), էջ 175-184:
6. Տանաջյան Լ., Սոցիալական փոփոխությունները Լոս Անջելեսի հայերի շրջանում (ըստ հետազոտության տվյալների), «Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու», 2017, թ. 3, էջ 174-180:
7. Տանաջյան Լ. (համահեղինակությամբ՝ Ներսիսյան Ս.), Թբիլիսիի հայ համայնքի ներկա իրավիճակը, «Հայկազեան Հայագիտական հանդէս», 2018, հտր. ԼԸ (38), էջ 641-654:
8. Տանաջյան Լ. (համահեղինակությամբ՝ Ներսիսյան Ս.), Ինքնակազմակերպման գործընթացները Կալիֆորնիայի հայերի շրջանում, «Պատմություն և Մշակույթ հանդես», 2018, էջ 234-241:
9. Տանաջյան Լ. (համահեղինակությամբ՝ Ներսիսյան Ս.),Կալիֆորնիայի հայերի ինքնակազմակերպման փորձը. ինքնության հարցեր, «Պատմություն և մշակույթ» հանդես, թ. 1, 2019, էջ 168-179:
10. Տանաջյան Լ., Լիբանանի հայ բնակչության էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները (համահեղինակությամբ՝ Կարապետյան Ռ.,

Ներսիսյան Ս., Բարսեղյան Ս., Նալբանդյան Կ.), Լիբանանահայերն այսօր. Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, խմբ. Ռ. Կարապետյան, Ա. Դաքեսյան, Ս. Բարսեղյան, Երևան-Բեյրութ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2019, էջ 911-60:

СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ АРМЯН ЛОС-АНДЖЕЛЕСА, ТЕГЕРАНА, БЕЙРУТА)

Резюме

Целью данной диссертации является выявление процессов социальных изменений в армянской диаспоре, на примере армянских общин Лос-Анджелеса (США), Тегерана (ИРИ) и Бейрута (ЛР), путем сравнительного анализа, а также представление особенностей меж- и внитрипоколенной социальной мобильности в трех различных этносоциальных средах.

В качестве объекта исследования были выбраны армянские общины Лос-Анджелеса, Тегерана и Бейрута. Это обусловлено не только большим количеством армян в этих странах и их богатой жизнедеятельностью, но и возможностью сравнения и анализа примерно одного и того же набора переменных в разных условиях.

Для достижения поставленной цели обозначены следующие задачи:

- изучить закономерности социальных изменений в контексте этносоциальных процессов в иноэтнической среде;
- определить роль этнокультурной среды в социальной мобильности в Армянской диаспоре;
- вывести общие показатели, измеряющие социальные процессы с целью сопоставления трех общин (Лос-Анджелес, Тегеран, Бейрут);
- выявить и сравнить социально-профессиональный состав армян трех общин;
- показать факторы, обуславливающие социальную мобильность в трех общинах;
- выявить общие и особые аспекты меж- и внутрипоколенной социальной мобильности армян в Диаспоре;
- проанализировать процесс меж- и внутрипоколенной социальной мобильности в связи с различными факторами.

Теоретической и методологической основой исследования послужили классические концептуальные подходы изучения диаспоры, социальных изменений и стратификации.

Учитывая многослойный состав и сложность объекта, исследование проводилось с применением комплекса качественных и количественных методов (стандартизированное интервью, глубинное интервью, экспертный опрос, наблюдение). Для получения дополнительной информации использовался также метод вторичной обработки данных .

Научная новизна диссертации заключается в применении междисциплинарного подхода (этносоциология, диаспорология, социальная антропология) к изучению социальных изменений армян в трех разных этносоциальных средах Армянской диаспоры.Теоретическая значимость работы заключается в том, что она представляет фактический материал, описывающий социально-демографические и этнокультурные

характеристики современной диаспоры, который может послужить основой для дальнейших исследований. Практическая значимость работы в том, что результатыисследования могут быть использованы для построения отношений Армения-Диаспора, а также для разработки политики и стратегии Диаспоры. С точки зрения признания и оценки социального потенциала диаспоры, это исследование может послужить основой для прогнозирования будущих социальных процессов в общинах.

В первой главе рассматриваются теоретические подходы и методологические вопросы исследования социальных изменений, а также взаимосвязь этносоциальных процессов с социальными изменениями.

Во второй главе рассматриваются исследования по диаспоре и их социальный контекст, а также представлены особенности этнокультурной среды трех армянских общин.

В третьей главе обсуждаются особенности социально-профессионального состава армян в трех общинах и представлен сравнительный анализ меж- и внутрипоколенной социальной мобильности.

Результаты исследования подтвердили ранее выдвинутые гипотезы исследования. Исследование показало, что качественные характеристики различных общин Армянской диаспоры (религиозные, этнические, культурные, социально-профессиональные и т.д.) оказывают влияние на социальную деятельность данной группы и ее интеграцию в окружающую среду. Характер и условия принимающей страны (консервативной, демократической, моноэтнической и т.д.) могут влиять на динамику социальной мобильности.

В свою очередь, миграционные процессы оказывают непосредственное влияние на этносоциальные процессы и изменения разных сегментов Армянской диаспоры. Религиозные, национальные особенности и общая политика страны проживания могут сыграть решающую роль в формировании социально-профессионального потенциала армянских общин в данной стране. На основе результатов проведенного этносоциологического исследования в целом можно утверждать, что различные группы одной и той же этнической принадлежности в Диаспоре, в зависимости от страны выезда или страны проживания, занимают разные социальные статусы и профессиональные слои.

SOCIAL CHANGES IN THE ARMENIAN DIASPORA: ETHNOSOCIOLOGICAL STUDY OF ARMENIANS IN LOS ANGELES, TEHRAN AND BEIRUT

Summary

The purpose of the dissertation is to reveal the peculiarities of social changes among Armenians in the Diaspora, which was accomplished by conducting a comparative analysis of the Armenian communities in Los Angeles, Tehran and Beirut. The research aims to also show the dynamics of inter- and intragenerational social mobility of Armenians in three different ethno-social environments.The reason for selecting these three communities as the subject of this study is not only due to the large number of Armenians and their experience of activities in these cities. It is also due to the possible comparison and analysis of about the same set of variables under different conditions.

To achieve the above-mentioned results, the following objectives were set:

- to understand the patterns of social change in the context of the ethno-social processes in the foreign environment;
- to clarify the role of ethno-cultural environment in the social change in the Armenian Diaspora;
- to derive common indicators for measuring social processes in comparative analysis of the three communities (Los Angeles, Tehran, Beirut);
- to identify and compare the socio-professional structures of the three communities;
- to reveal the factors influencing social mobility in the three communities;
- to identify common and specific aspects of the inter- and intragenerational social mobility of the diasporan Armenians;
- to analyze the inter- and intragenerational social mobility in relationship to a number of factors.

The theoretical and methodological bases of the study include the classical conceptual approach to Diaspora studies, social changes and stratification. The study was conducted using a set of qualitative and quantitative methods. Secondary data analysis was also used to obtain additional information.

The scientific novelty of the work lies in the application of an interdisciplinary approach (ethnosociology, diasporology and social anthropology) to the study of social change in three different diasporic Armenian ethno-social environments for the first time. The theoretical significance of the work is in its analytical material, which describes the socio-demographic and ethno-cultural characteristics of the current Armenian Diaspora and can serve for further study of such problems.

Chapter 1 discusses both the theoretical approaches and methodological issues in the study of social change, in addition to the latter's relationship to the ethno-social processes.

Chapter 2 discusses the main directions in Diaspora studies and their social context, as well as the features of the ethno-cultural environment of the three Armenian communities.

Chapter 3 discusses the peculiarities of the socio-professional structure of the three Armenian communities and presents a comparative analysis of inter- and intragenerational social mobility.

The results of this study confirmed the previously established research hypotheses. The study showed that the qualitative characteristics of the different communities of the Armenian Diaspora (religious, ethnic, cultural, socio professional, etc.) influence the activity of this group and its integration within the new host country environment. Migration processes have a direct impact on the ethno-social processes and changes of different segments of the Armenian Diaspora. The religious, national and general policies of the host country can play a decisive role in the formation of the socio-professional potential of the communities. The features of the host country (conservative, democratic, mono-ethnic, etc.) influence the dynamics of social mobility. On the whole, based on the results of the ethno-sociological research, the study argues that different parts of the same ethnic group in the Armenian Diaspora occupy different social statuses and professional strata, depending on the country of origin or host country.